

«Ջինիշյան» հիշատակի հիմնադրամը ՀՀ Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում բնակվող 18-35 տարեկան պոտենցիալ, սկսնակ և գործող ձեռներեցիներին ընձեռում է բիզնես սկսելու կամ զարգացնելու բացառիկ հնարավորություն: Հիմնադրամը նպատակ ունի նպաստելու ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը երիտասարդների շրջանում և նոր աշխատատեղերի ստեղծմանը վերոհիշյալ մարզերում:

Ծրագիրն ուղղված է բոլոր այն երիտասարդներին, որոնք ունեն.

- **ցանկություն սկսելու իրենց սեփական բիզնեսը,**
- **նոր սկսած բիզնես (մինչև 1 տարի գործունեությամբ) և պայքարում են այն կայացնելու համար,**
- **գործող բիզնես (մինչև 4 տարի գործունեությամբ) և ցանկանում են այն առավել ընդլայնել և զարգացնել:**

Անդամակցելով Երիտասարդ ձեռներեցիների միջազգային ցանցին (YBI), որը գտնվում է Միացյալ Թագավորությունում և գործում է աշխարհի 47 երկրում՝ «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամը սույն ծրագրի շրջանակում մշակել է նոր մոտեցումներ և մեխանիզմներ՝ երիտասարդ ձեռներեցիներին երկարատև համապարփակ աջակցություն ապահովելու նպատակով: Հետևաբար, հաշվի առնելով նոր մոտեցումները, սույն ծրագիրը բաղկացած է լինելու հետևյալ փուլերից՝

Փուլ 1. Ընտրության առաջին փուլի արդյունքում գրեթե բոլոր դիմորդները մասնակցում են **բիզնես գաղափարների մշակման և զարգացման դասընթացին:**

Փուլ 2. Ընտրության երկրորդ փուլի արդյունքում ընտրյալները մասնակցում են **բիզնեսի պլանավորման և կառավարման թեմայով վերապատրաստման գործնական դասընթացին:**

Փուլ 3. Դասընթացի մասնակիցները **մշակում և ներկայացնում են իրենց բիզնես ծրագրերը:**

Փուլ 4. Բարձր գնահատված իրատեսական և նորարական գաղափարներով բիզնես ծրագրերը ստանում են **արտոնյալ վարկեր:**

Փուլ 5. Մասնակից երիտասարդ ձեռներեցիներին տրամադրվում է **շարունակական (մինչև 5 տարի) աջակցություն**, որն ուղղորդվում է փորձառու ձեռներեցիների, բիզնես խորհրդատուների, նեղ փորձագետների և այլ մասնագետների աջակցությամբ:

Դիմումի ձևը և մանրամասն տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք այցելել «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի /ՋՀՀ/ վեբ կայքը www.jinshian.org կամ զանգահարել Վորլդ Վիժն տարածքային զարգացման ծրագրի գրասենյակ կամ ՋՀՀ մարզային գրասենյակներ.

- Մարզ Լոռի, կոնտակտային անձ՝ Լիլիթ Մելիքսեթյան /Վորլդ Վիժն/
հեռ. 095 005 415, lilit_meliksetyan@wvi.org
- Մարզ Լոռի, կոնտակտային անձ՝ Մելինե Վարդանյան /ՋՀՀ/
հեռ. 043 08 06 29, 90m.vardanyan@gmail.com
- Մարզ Գեղարքունիք, կոնտակտային անձ՝ Գառնիկ Գափոյան /Վորլդ Վիժն/
հեռ. 095 005 443, garnik.gapoyan1@gmail.com
- Մարզ Գեղարքունիք, կոնտակտային անձ՝ Վարդան Գարեյան /ՋՀՀ/
հեռ. 094 26 07 90, vgareyan@mail.ru
- Մարզ Շիրակ, կոնտակտային անձ՝ Մելինե Շահնազարյան /ՋՀՀ/
հեռ. 091 403 805, shahnazaryan.meline@gmail.com
- Մարզ Տավուշ, կոնտակտային անձ՝ Հարություն Ալիխանյան /ՋՀՀ/
հեռ. 077 38 48 38, alikhanyanharut11@gmail.com
- Մարզ Տավուշ, կոնտակտային անձ՝ Տիգրան Մաքանյան /Վորլդ Վիժն/
հեռ. 095 005 287, tigran_sakanyan@wvi.org

Լրացված դիմումներն ուղարկել վերոնշյալ էլեկտրոնային հասցեներից մեկով՝ կախված Ձեր բնակության վայրից:

Դիմումի ներկայացման վերջնաժամկետն է **սույն թվականի փետրվարի 25-ը:**